

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հովիկ Աբրահամյանի, Գալուստ Սահակյանի, Հովհաննես Սահակյանի և Կորյուն Նահապետյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած <<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>>, <<Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>> և <<Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունի:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում
փոփոխություններ կատարելու մասին**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հունիսի 17-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 221-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «թերի պատճառաբանված, սխալ պատճառաբանված կամ չպատճառաբանված էե բառերը փոխարինել «թերի կամ սխալ է պատճառաբանվածե բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի

ա) 1-ին կետում «թերի պատճառաբանված, սխալ պատճառաբանված կամ չպատճառաբանված էե բառերը փոխարինել «թերի կամ սխալ է պատճառաբանվածե բառերով:

բ) 6-րդ կետում «թերի է պատճառաբանված, սխալ է պատճառաբանված կամ պատճառաբանված չէե բառերը փոխարինել «թերի կամ սխալ է պատճառաբանվածե բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ
կատարելու մասին**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «թերի պատճառաբանված, սխալ պատճառաբանված կամ չպատճառաբանված էե բառերը փոխարինել «թերի կամ սխալ է պատճառաբանվածե բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի

ա) 1-ին կետում «թերի է պատճառաբանված, սխալ է պատճառաբանված կամ պատճառաբանված չէե բառերը փոխարինել «թերի կամ սխալ է պատճառաբանվածե բառերով:

բ) 6-րդ կետում «թերի է պատճառաբանված, սխալ է պատճառաբանված կամ պատճառաբանված չէե բառերը փոխարինել «թերի կամ սխալ է պատճառաբանվածե բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 21-ի դատական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «թերի պատճառաբանված, սխալ պատճառաբանված կամ չպատճառաբանված էե բառերը փոխարինել «թերի կամ սխալ է պատճառաբանվածե բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի

ա) 1-ին կետում կետում «թերի պատճառաբանված, սխալ պատճառաբանված կամ չպատճառաբանված էե բառերը փոխարինել «թերի կամ սխալ է պատճառաբանվածե բառերով:

բ) 6-րդ կետում. «թերի է պատճառաբանված, սխալ է պատճառաբանված կամ պատճառաբանված չէե բառերը փոխարինել «թերի կամ սխալ է պատճառաբանվածե բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԷՇ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին է ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Սահմանադրական դատարանի 2010թ. հունիսի 15-ի ՄԴՈ-896 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումն իրացնելու անհրաժեշտությամբ:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ եվ 240-րդ հոդվածներով ամրագրված են համապատասխանաբար վերաքննիչ եվ վճարեկ դատարանի լիազորությունները: Այդ իրավադրույթներով վերաքննիչ եվ վճարեկ դատարանները գործն ըստ էության լուծող դատական ակտի վերանայման արդյունքում վերաքննիչ բողոքը մերժելու դեպքում լիազորված են դատական ակտը թողնելով Օրինական ուժի մեջ պատճառաբանել դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող, սակայն թերի պատճառաբանված, սխալ պատճառաբանված կամ չպատճառաբանված դատական ակտը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ «...թերի է պատճառաբանված, սխալ է պատճառաբանվածե բառակապակցությունը սահմանադրականության խնդիր չի առաջացնում եվ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանին վերապահված՝ քննարկվող լիազորությունը համահունչ է ՀՀ Սահմանադրությամբ, Մարդու իրավունքների եվ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական

կոնվենցիայով երաշխավորված՝ արդար դատաքննության ել ողջամիտ ժամկետում դատական քննության իրավունքներին: Հիշյալ լիազորության բացակայությունը, ընդհակառակը, կարող է վտանգել արդար դատաքննության, ինչպես նաև ողջամիտ ժամկետներում դատաքննության իրավունքները:

Այլ է վիճակը «...կամ պատճառաբանված չէ բառակապակցության առնչությամբ: Նման ձեւակերպման առկայությունն ինքնաբերաբար ենթադրում է չպատճառաբանված դատական ակտի գոյություն: Մինչդեռ օրենսդրությունն ընդհանրապես պետք է բացառի չպատճառաբանված դատական ակտի գոյությունը, քանի որ նման ակտը չի կարող համապատասխանել իրավական պետության հիմնարար սկզբունքներին, չի կարող երաշխավորել արդյունավետ դատական պաշտպանությունը, ինչպես նաև ապահովել խախտված իրավունքների արդյունավետ վերականգնումը:

Նույն պատճառներով են պայմանավորված նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության եւ դատական օրենսգրքերում առաջարկվող փոփոխությունները: